Հայտարարություն

«Երևանի հ. 117 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ դասվարի, «ԹԳՀԳ » (11 դասաժամ) , « Երաժշտություն» (14 դասաժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է ուսհաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ (ձև 5),
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝

1)դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեության իրավունքից

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը:

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատատրելու համար:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:30-ին, «Երևանի Կոստան Զարյանի անվան հ. 117 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. սեպտեմբերի 03-ից մինչև 2025թ. սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Հասցեն՝ ք. Երևան, Ֆանարջյան փ. 15 շենք

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 28-76-08 հեռախոսահամարով: